ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.	Անունը, ազգանունը. **Արմեն Ղազարյան**
2.	Զբաղեցրած պաշտոնը. **ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության պետ (պատվիրակության ղեկավար)**
3.	Գործուղման վայրը և ժամկետները. **2019 թվականի հուլիսի 3-5**
4.	Հրավիրող կողմը. **ՀՀ վարչապետի 2019թ. հուլիսի 3-ի 870-Ա որոշմամբ սահմանված պատվիրակության կազմում**
5.	Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). **ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև միմյանց տարածքներում աշխատող քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին 1994թ-ի համաձայնագրի իրականացման հարցերով համատեղ հայ-ռուսական աշխատանքային խմբի ութերորդ նիստին մասնակցելու նպատակով**
6.	Քննարկված թեմաները. **Աշխատանքային խմբի նիստի ընթացքում անդրադարձ է կատարվել միգրացիոն ոլորտում ՀՀ և ՌԴ միջև առկա իրավապայմանագրային բազայի թարմացման անհրաժեշտությանը, ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիներին առնչվող խնդիրներին, ինչպես նաև ՌԴ տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող այն ՀՀ քաղաքացիների խնդիրներին, որոնց ՌԴ իշխանությունները դիտում են «ռիսկի խմբում»** (աշխատանքային գործունեության իրականացում առանց **աշխատանքային պայմանագրերի**): Անդրադարձ է կատարվել նաև երկու երկրների միգրացիոն օրենսդրությունների փոփոխություններին և քաղաքացիներին այդ մասին հնարավորինս լայն իրազեկման ապահովման անհրաժեշտությանն ու այդ ոլորտում **համագործակցության հնարավորությանը**:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը. **Աշխատանքային խմբի նիստից առաջ պատվիրակությանը հյուրընկալել է ՌԴ-ում ՀՀ** արտակարգ և լիազոր դեսպան Վարդան Տողանյանը, ում հետ քննարկվել են ինչպես **օրակարգային հարցերը, այնպես էլ անդրադարձ է եղել նախօրեին դեսպանի և ՌԴ ՆԳՆ Միգրացիայի գլխավոր վարչության պետի հանդիպմանը:** **Հուլիսի 4-ին ՌԴ ներքին գործերի նախարարությունում տեղի է ունեցել հայ-ռուսական**

աշխատանքային խմբի նիստը, որը ռուսական կողմից գլխավորում էր ՌԴ ներքին գործերի նախարարության միգրացիայի գլխավոր վարչության պետի տեղակալ Դմիտրի Դիմիդենկոն: Կողմերը բավարար են գնահատել աշխատանքային խմբի նախորդ նիստի արդյունքում ընունված արձանագրության կատարման ընթացը, ինչպես նաև միմյանց ներկայացրել են երկու երկրներում տիրող առկա միգրացիոն իրավիճակը, հիմնական միգրացիոն հոսքերը, դրանց ուղղությունները, ծագման և նպատակակետ երկրներին առնչվող հարցերը: Կողմերը նաև միմյանց ներկայացրել են երկու երկրների միգրացիոն օրենսդրությունում տեղի ունեցած և նախատեսվող փոփոխությունների մասին: Մասնավորապես, ռուսական կողմը տեղեկացրել է, որ ՌԴ պետական դումայի աշնանային նստաշրջանին է ներկայացվելու օրնագիծ, որով նախատեսվում է վերացնել մշտական կացության կարգավիճակի (вид на жительство) ներրկայիս 5-ամյա սահմանափակումը և այն դարձնել անժամկետ: Հայկական կողմը տեղեկացրել է 2019թ-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օտարերկրացիների աշխատանքի թույլտվությանն առնչվող ենթաօրենսդրական ակտերի կարգավորումների մասին, ինչպես նաև ընդհանուր առմամբ ներկայացրել դրանց փոփոխման հնարավոր ուղղությունները:

Օրակարգային հարցերի թվում է եղել ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների խնդիրները: Ռուսական կողմը տեղեկացրեց, որ ՌԴ մուտքի արգելք ունեցող անձանց թվում ՀՀ քաղաքացիները կազմում են շուրջ 15 հազար: Միաժամանակ պատրաստակամություն հայտնվեց շարունակել համագործակցությունը ՀՀ Միգրացիոն ծառայության հետ ՌԴ միգրացիոն օրենսդրության թեթև խախտումների դեպքում հայկական կողմի միջնորդությամբ վերացնել մուտքի արգելքները, սակայն շեշտվեց նաև առավել լայն թվով անձանց մուտքի արգելքի վերացումը (այսպես կոչված «միգրացիոն համաներումը») հնարավոր կլինի քաղաքական ղեկավարության միջամտությամբ: Ռուսական կողմը նշեց նաև, որ իրենց դիտարկումներով շուրջ 130 հազար ՀՀ քաղաքացիներ գտնվում են աշխատանքային միգրացիայի «ռիսկի գոտում», այն է՝ հնարավոր է բնակվում և աշխատում են ՌԴ տարածքում առանց աշխատանքային պայմանագրերի կամ համապատասխան գրանցման: Այս առնչությամբ հայկական կողմը առաջարկեց միասին ներգրավվել պոտենցիալ աշխատանքային միգրանտների իրավունքների իրազեկման գործընթացքում՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ներկայումս Միգրացիոն ծառայությունը և Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) երևանյան գրասենյակը նախատեսում են նմանատիպ ծրագրի իրականացում: Ռուսական կողմը մեծ հետաքրքրության հայտնեց այդ ծրագրի հանդեպ և խնդրեց իրենց ևս ներգրավել այդ գործընթացում:

Անդրադարձ կատարվեց նաև ՀՀ-ում ՌԴ ՆԳՆ ներկայացուցչության շրջանակներում միգրացիոն մարմնի ներկայացուցիչների ներգրավման հարցը: Շեշտվեց, որ խնդիրն ունի հետագա ներպետական քննարկման և համաձայնեցման կարիք:

Նիստի ընթացքում քննարկեց նաև առանց մուտքի պետության տարածքը լքելու մուտքի նպատակի փոփոխության հնարավորությունը: Հայկական կողմը շեշտեց իր նախկինում

	հնչեցրած առաջարկությունը կիրառելու վերը նշված հնարավորությունը՝ առավել ևս հաշվի առնելով, որ այդ հարցը քննարկվել է նաև աշխատանքային միգրացիայի հարցերով ԵԱՏՄ խորհրդատվական կոմիտեի նիստի ընթացքում, իսկ նման պրակտիկա արդեն իսկ կիրառվում է Ղազախստանում (հաշվի առնելով օրենսդրության առանձնահատկությունները՝ ՀՀ-ում նման խնդիր չկա): Ռուսական կողմը շեշտեց, որ դրական է վերաբերվում հայկական կողմի առաջարկին և իրենց մոտ այդ հարցով արդեն իսկ նախնական քննարկումներ տեղի են ունեցել:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը. Հանդիպման ավարտին ստորագրվել է ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև միմյանց տարածքներում աշխատող քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին 1994թ-ի համաձայնագրի իրականացման հարցերով համատեղ հայ-ռուսական աշխատանքային խմբի ութերորդ նիստի արձանագրությունը (կցվում է):
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները. Առաջարկում ենք ՀՀ քաղաքացիների հանդեպ «միգրացիոն համաներում» կիրառելու հնարավորության հարցը ներառել հայ-ռուսական բարձր մակարդակի բանակցությունների օրակարգում: Մինչ այդ առաջարկում ենք նաև նշված հարցի շուրջ քննարկում կազմակերպել ՀՀ վարչապետի աշխատակազմում՝ ՀՀ ԱԳՆ և Միգրացիոն ծառայության ներկայացուցիչների մասնակցությամբ:
10.	Ստորագրությունը, ամսաթիվը: 09.07.2019